ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ
ՄԱՆԱՒՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օգոստոս—սեպտեմբեր 1908 թ.

Խմբագիր-Հրատարակիչ Ցիգրաճ Նազարեանց

ԱՂԲԻՒՐ

ՏԱՐԻ XXVI №№ 8—9

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

Ժողովրդասէր եւ հայրենասէր անվեհեր երկաթէ Պատրիարքը տասներեքամեայ իր ամառավայրից օրերս յաղթականակով վերադարձաւ Կ. Պոլիս։

Մեր արիւնակիցներէ վերածնունդ արշալոյսով հնաոյած Աղբիւրը, ցնծութեամբ ողջունում է սիրեցեալ Ժողովրդապետի շնորհաբեր վերադարձը։

ՕԱԶԻՍ

(Ա.Բեւելեաց ճէֆիաթ Ա. Բոյկովի)

Անծայր ծովի պէս փռուած անպտուղ անապատում յոգնած նստած էր մարդոց մի խումբ։ Նրանց դէմքերը գունատ էին, աչքերը տենդոտ, և ծարաւը խեղդում էր նրանց կոկորդը։

Կիզիչ, հեղձուցիչ քամին նրանց շուրջը չարութեամբ չոր աւազից սիւներ էր ծառացնում, կուրացնելով աչքերնին և ծեծելով բաց կրծքերը։

Եւ նրանք ճնշուած, մոռացուած, յոգնած ու յուսահատ ընկնում էին երեսն իվայր և հառաչելով ասում. ների՛ֆ է, ինչի՞ աշխատեցիֆ առաջ գնալ։ Մեր ոտները յոգնել են. այս անապատն անվերջ է, եւ աչքեում՝ այնտեղ, հորիզոնի յետեր բացի այս նոյն աւազը ոչինչ չկայ եւ չի էլ կարող լինել։

Ու երկար ընկած էին նրանք խլացնելով չհասցած օդն իրենց հառաչներով և անիծելով իրենց կեանքն ու գանգատւելով նրանից։

Բայց ահա, նրանից մինը ելաւ և սկսեց ագահութեամբ նայել հեռուն։ Մատղաշ էր նրա դէմքը, և աչքերում համարձակութեան և քաջութեան փայլ կար։

—Ո՛չ, ասաց նա, ես չեմ հաւատում, որ այնտեղ հեռուում ոչինչ չլինի, որովհետև օդն այնպէս թափանցիկ է և երկինքը կապուտակ։ Հաւատում եմ, որ այնտեղ հեռու, և թերևս շատ հեռու, բայց և այնպէս, եթէ ոչ այս մեռեալ աշխարհի վերջը, գոնէ պտղաբեր հողի մի կտոր կայ, որ թափանցիկ բիւրեղանման աղբերակի շնորհիւ կենդանութիւն ունի և պսակւած է սէգ արմաւենիներով։ Եւ ես, ինչ գնով էլ այդ լինի, պիտի գնամ և գտնեմ այդ տեղը։

Բայց մարդիկ նրա խօսքերին չարութեամբ վերաբերւեցին. չորս կողմից սկսեցին նրան յանդիմանել, ծաղրել, խղճալ և նզովել, որովհետև յուսահատները չեն սիրում խիզախներին, և այդպիսի խօսքերը նրանց յանդիմանութիւն են։

Նրանք խնդրում, աղաչում էին նրան, որ չըգնայ, վախացնում էին, որ կարող է մոլորւել և իր ամրողջ կեանքը միայնակ անցնել. ծիծաղում էին վրան, բայց նա գնաց։

Իսկ նրանք մնացին...

Տխուր և միօրինակ շարունակւեց նրանց կեանքը. տօթ ու խեղդող օրը վոխւեց մութ, սառն գիշերի։ Եւ նրանք՝ մերթ տօթից թուլանալով, մերթ ցրտից ատամ կրճտելով պառկած էին միշտ նոյն տեղում, և նզովում էին իրենք իրենց և իրենց վիճակը։

Հառաչելուց և գանգատւելուց դադրած, երբեմնակի չարութեամբ և ատելութեամբ յիշում էին հեռացածին և մի տեսակ չարախնդաց ոգևորութեամբ մինը միւսի եանից նոր պատկերներ էին երեակայում, թէ ինչպէս նա այժմ մոլորւած, մենակ ու յուսահատ ընկած է անծայր անապատում և խլացնում է օդն իր հառաչներով և հեծկլտոցով։

Բայց նա չըմոլորւեց։

Մի օր մարդիկ նրան իրենց առաջին տեսան։ Նա գունատ էր, և աչքերը տենդոտ կերպով փայլում էին։ Նրա կրծքին մի վէրք էր երեում, որից արիւն էր կաթում և լճանում էր գետնին։ Արեան լճից ձգւած էր և անյայտանում էր հորիզոնում արեան մի նեղ ժապաւէն։

Նա կանգնած էր և պարզել էր դէպի նրանց իր ձեռքը, որի մէջ ամուր սեղմած էր արմաւենու թոռւած տերևի մի կտոր։

—Ղրայրներ, խռպոտ ձայնով ասաց նա—ես գտայ։

Բոլորի կրծքից միաբերան ուժգին աղաղակ լսւեց։ Ուրախութիւնից ծիծաղելով և լալով շրջապատեցին նորան, համբուրում էին ձեռքերը, կանաչի այն կտորը, որ իրենց համար բախտ և կեանքի իմաստի մարմնաւորումն էր դարձել։

Բայց նա թուլացաւ։

Հնձւած խոտի պէս գլորւեց նա ցած, և պղտոր, մահւան սուեր կրող հայացքով դառնալով նրանց, շշնջաց.

—Թողէք ինձ, ես շուտով կը մեռնեմ... Գնացէք... գնացէք այդ ճանապարհով... այն նշանով, որ ես եմ արել... Երբ ես ետ էի դառնում, ճանապարհը չըկորցընելու համար այնտեղ, ուր դեռ երեւում է ամենաբարձր արմաւենու կատարը, ինձ վիրաւորեցի... և այս արիւնոտ շերտը, որ իմ յետևից է ձգւել, ձեզ այնտեղ կառաջնորդէ... գնացէք... Շտապէք, մէկ չէ քամին այդ նշանը կը քանդի... ինձ թողէք, ես արդէն մեռնում եմ...

Բայց նրանք չըթողին նրան։

Երբ նա իր աչքերը փակեց, նրանք առնելով մարմինը ձեռքերի վրայ, առյդ ու համարձակ առաջ շարժւեցին, նրա պատւի և հերոսական վարմունքի ...համար կրակոտ և ուժով լի ներբողներ յօրինելով...

Ե. Ս.

ՁՈՂԻԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅՐԵՆԻՔ

(Իրական)

I

Սրեզակը բաւականին բարձր էր կանգնած կապոյտ երկնակամարի վրայ՝ հեղեղատեղով բնութիւնը ոսկեզօծ լուսով. դաշտերը տեղ-տեղ դեռ ծածկուած էին եղեամի սպիտակ շղարշով։ Հարաւում նշմարւում էին ռուս-տաճկական սահմանագլխի վրայ դռնուած Ղարաուրղանի խրճիթները, իսկ հորիզոնը պատած էր ձիւնակատար լեռներով։

Ճանապարհի վրայ նստած էին մի խումբ մշեցի պանդուխտներ և առանձնակի, քարի վրայ՝ մի հասակն առած մարդ և մի երիտասարդ կին, որ ամբողջ մարմնով դողում էր։ Ցնցոտի դարձած կապոյտ դաստակի անթարթին բոլորովին չէր պաշտպանում ցրտից նրա նիհարած մարմինը, իսկ ծակծկոտուած սօլերից ներսում էին նրա համարեա մերկ ոտները։

Երիտասարդ կինը Մշու Ը. գիւղի յայտնի ռէս Գրքոյենց Մադոյի հարս դեղանի Ջողիկն էր, բայց այս երկու տարուայ չարքաշ կեանքը պանդխտութեան մէջ, իր զուտակաց կաթսը, ախ ու վախով, անքուն աչքերով լուսացրած գիշերները, մի խօսքով՝ քաղցը, ցուրտը, դարդերը ձեռք ձեռքի էին տուել, որ չքնաղ Ջողիկին կարճ ժամանակում վերափոխեն, այլանդակեն և նախկին Ջողիկի ուրուականը դարձնեն...

Հասակաւոր մարդը ինքն Մադօն էր, Ջողիկի սկեսայրը, որ երկու տարի պանդխտութեան մէջ մնալուց յետոյ Կովկասի քարաքներից մէկում, ուր ինքը մշակութիւն էր անում, իր հարսը լուացք, վերադառնում էր տուն՝ մէկը իր ծիրանի կնոջ կողքին վերջին շունչն աւանդելու համար, իսկ միւսը, որի ամուսինը հինգ տարի առաջ սպանուել էր քրդերից, իր որբիկների կարօտն առնելու։

—Հայս, ես քեզ չասի մնացիր, գաղնան արի. հիմա ցրտերն ընկել են, շատ կընեղնաս, պիտց Մադօն իր հարսին տեսնելով թէ նա ինչպէս ձեռքերը կռնատակին դողդողում է։

—Ախր թէ այս ձմեռ իմ Տիգրան, իմ Փարֆիւր չտեսնեմ, ես կըմեռնեմ, ասեց Ջողիկը, աւելի ևս կծկուելով և մի փոքր լռութիւնից յետոյ աւելացրեց՝—էհ, բան չկայ, արևը շուտով կըտաքանայ, օդն անուշ է։

—Ի՞նչ էք նստել, երթանք, ասեց մէկը խմբի միջից։

Ոչ ոք տեղից չշարժուեց, միայն մի քանիսի կրծքից խոր հառաչանք դուրս եկաւ՝ «տուն քանդուի անօրէնի, սիրտ կայ որ երթանք»։

Ֆիզիքական յոգնութիւնից չէր, որ պանդուխտները նստել էին և երեսներին տրտմութեան քող քաշել. երկու ժամ հազիւ լինէր, ինչ նրանք դուրս էին եկել իջևանից, իսկ երկու ժամուայ ճանապարհը մշեցու համար մի քայլ անել է։ Հոգեկան յուզմունքն էր, որ նրանց ոտները կաշկանդել էր. նրանք արդէն մօտենում էին տաճկաց սահմանին...

Երկար տարիներ պանդխտութեան տաժանելի կեանքը քաշելուց յետոյ, մշեցին հայրենիք է վերադառնում, մէջքին կապած իւր բոլոր ունեցած-չունեցածը, որ կազմում է մի հնամաշ բաղդադի խաշկինակ, որէէ գթառատ տիկնոջ պարգև, և մի քանի դաղ չիթ իւր սիրելի կնոջ ու զաւակների համար։

Հայրենիք վերադառնալիս մեր մշեցին բոլորովին փոխւում է. նա նման չէ այն չուառած, մոլորած, մէջքը ծռած մշակին, որ սովորաբար տեսնում ենք մեծ քաղաքների փողոցներում։

Այն յոյսը, որ նա մի երկու երեք շաբաթից յետոյ կըզրկևսառնուի իւր սրտին այնքան թանգ էակների հետ. կըտեսնի այ:չափ կարօտած հայրենի երկիրը, նրա սարն ու ձորը, դաշտն ու ջուրը,—մի կախարդական ազդեցութիւն է անում մշեցու վրայ։

Նրա կորացած մէջքը ուղղւում է, կուրծքը լայնանում, մարած աչքերը փայլ են ստանում, երեսը խոհուն արտայայտութիւն։ Նա ընթանում է մեծ և հաստատ քայլերով, իւր ընկերների հետ խօսում է բարձրաձայն և ոգևորուած, ձորեր ու սարեր նա թռչկոտալով ու երգելով է անցնում։ Նա առ ժամանակ մոռանում է հայրենիքում քաշած և քաշելիք տանջանքները. նրա մտքում մի պատկեր միայն կայ, այդ իւր խրղճուկ օջաղն է և իւր սիրելիների դէմքը։

Բայց այդ ոգևորութիւնը տևում է մինչև Ղարս, որտեղ մշեցին անցագիր է առնում տաճկական հիւպատոսից. որքան ուրախ մտնում է նա այդ քաղաքը, նոյնքան տխուր դուրս է գալիս այնտեղից։

Նա այնտեղ նորից սկսում է զգալ, տաճկաց կառավարութեան սոսկալի ճընշումն։ Պանդուխտները ժամերով, օրերով վզները ծռած, ազաչանք-պազատանք աննելով անցագրեր են խնդրում։ Այդտեղ նրանք լսում են նորեկ հայրենակիցներից, թէ զուր է նրանց չալչարանքը, զուր են վերադառնում հայրենիք, նրանց տները աւերել են. և կոտրւում է հայրենիք վերադարձող մշեցու յոյսը, թէ նա մի օր իւր գիւղը կըհասնի։

Եւ նրանք Ղարսումը մի օր մնալու փոխարէն, մնում են եօթ-տաս օր, տատանուելով թէ արդեօք գնան, թէ մնան դարձեալ դառը պանդխտութեան մէջ։ Բայց այդ դժողքի միջից մշեցուն իւր տունն է կոչում մի ալեզարդ գլուխ, կամ մի գեղածիծաղ մանկան երես և նա տխուր ու յուսահատ սրտով, թուլացած ծնկներով քայլերն ուղղում է դէպի հայրենիք տանող ճանապարհը...

Նա սկսում է շուտ-շուտ իջևանել. կանուխ լուսաբացին չէ նա ճանապարհ ընկնում և քանի մօտենում է սահմանին, այնքան աւելի է դանդաղեցնում իւր քայլերը, իսկ երբ նրա աչքին երևում է սահմանագլուխը, ուժասպառ նստում է ճանապարհի եզրին։

II

—Է՜հ, ելէք տղերք, մինչև երբ նստենք, ասեց այս անգամ Մադօն, տեղիցը վերկենալով։

—Ելէք, ելէք, կրկնեցին քանի մի ձայն միասին, նոյնպէս տեղներիցը կանգնելով։

Եւ պանդուխտները անվստահ քայլերով առաջ գնացին։

—Ես չկարծեմ, որ մեր երկիրը չատանայ, ասեց Մադօն, գլուխը շարժելով։

—Է՜հ, այնքան որ մեզ թողնեն մեր երկրում մեանենք, նրա հողին արժանանանք, առար-

կեց մի ծերունի, որ յիրաւի վերադառնում էր հայրենիք միմիայն իւր ոսկերքը հայրենեաց հողին յանձնելու համար։

Այս տեսակ տխուր և յուսահատուր խօսակցութիւն անելով, պանդուխտները հասան սահմանագլուխը։

—Ախ, ես մեռնէի, կրկին ձեր երեսը չտեսնայի, շշնջաց Ղողիկը, տեսնելով թուրք պաշտօնեաներին իրանց կարմիր ֆասերով ու կապոյտ, կարճ բաճկոններով, որոնց գեղին կոճակները դեռ հեռուից փայլեցին՝ Ղողիկի սրտի համար մի անախորժ փայլով։

Ղողիկի հայեացքը կարմիր ֆասերից ընկաւ ուղղակի սահմանագլխի սև ու սպիտակ սիւներին, որոնք նրա վրայ կախադանի տպաւորութիւն գործեցին։

Բայց ահա օդումը թնդաց մի կոպիտ հրամայական ձայն՝ «դուրուն» (կանգնեցէք)։

Պանդուխտները կանգ առան։

Երեք թուրք, որ կանգնած էին սահմանատան առաջ, մօտեցան նրանց։

Մշեցիք մինչև գետին գլուխ տուին։

Թուրքերից մէկն անցաւ աջ, միւսը ձախ, մերթ ապահովութեամբ նայելով մշեցոց մէջքի բեռին, մերթ վիրաւորական հայեացքը ձգելով Ղողիկի վրայ, որ միակ կինն էր ամբողջ խմբի մէջ և կիսակենդան կանգնած էր իւր սկեսրայրի յետևին։ Իսկ երրորդը մի հաստաբեղ, որ աւելի գիշատիչ գազանի էր նմանում, քան մարդու, մօտեցաւ խմբին և իւր արիւնալի աչքերը պտտեցնելով նրանց վրայ գոռաց՝

—Ո՛ւր էիք ջահանդամուկ մեր երկրից։

—Ադան ապրաստ կենայ, գնացել էինք մշակութեան, որ մեր ճժեր սոված չմեռնեն, պատասխանեցին, կրկին գլուխ տալով։

—Ձեր եօլ թեսքէրէսին։

Հայերն անհամարձակ մեկնեցին իրանց անցագրերը բացի Ղողիկը, որ չունէր անցագիր։

Նախ քան թղթերը վերցնելը, թուրքը հրամայեց բոլոր խմբին նստել, իսկ Ղողիկին —նրանցից բաժանուել։

Մշեցիք անմիջապէս նստեցին, իսկ Ղողիկը հեռացաւ նրանցից և կանգնեց մեկուսի, դատապարտեալի պէս ձեռքերը կրծքին խաչած և իւր վրայ զգալով զապթիաների անամօթ հայեացքները։

Թուրք ծառայողը հաւաքեց անցագրերը, յետոյ յուշմատով համարեց մի առ մի իւր առաջև չորած հայկրին ու գնաց դէպի սահմանատունն, որ անցագրերը իւր մեծաւորին ներկայացնի։

Մնացած երկու զապթիաները իրար աչքով արին, մէկն իսկոյն հեռացաւ, իսկ միւսը մօտեցաւ մշեցոց զրպաններն ու ծոցերը խուզարկելու։

Նա հանում էր փողի քսակները, մանեղով շօշափում. եթէ նկատում էր թէ քսակի մէջ բացի մի-երկու զրօշից ոչինչ չկայ, յետ էր դարձնում տիրոջը, իսկ եթէ շատից-քչից բան էր գտնում, իսկոյն բանում էր քսակի բերանը, շուռ ու մուռ տալիս, փողերը հանում և ամենայն հանդստութեամբ իւր զրպանը գնում։

Հազիւ դա իւր պաշտօնը կատարեց,—հեռացաւ, երկրորդ զապթիան ուղղեց իւր քայլերը դէպի խումբը։

Հայերը գուշակելով, որ դա էլ պէտք է իւր պաշտօնը կատարի, փողերի քսակները հա-

նակներից աւելի պէտքականները իւր գրպանը ղրեց ու գնաց։

Անցաւ բաւականին ժամանակ, հայերը անհանգիստ սպասում էին նորանոր գործողութիւնների։ Վերջապէս ղէնապիր հաւաքող պաշտօնեան երևաց. կանչեց պանդուխտներին և յայտնեց թէ նրանց եօլ-թեսքէրէսիքը մի գրօշի արժէք չունին, չնայելով որ Ղարսում իրանց— տաճկաց հիւպատոսն է տուել և թէ բացատրութիւն ստանալու համար մարդագլուխ յիսուն կոպէկ պէտք է վճարել, որ Ղարս հեռագիրը տրուի։

Մշեցիք օրհնեցին պաշտօնեային, որ նա այնքան բարի է, որ այդպէս մի հնար դտաւ և իրանց չվերադարձրեց Ղարս, ինչպէս սպառնացել էր և դողդոջուն ձեռքերով քսակները բացին ու ունեցողը չունեցողի փոխարէն տալով, պահանջած գումարը լրացրին։

Փողն առնելուց յետոյ, պաշտօնեան հրամայեց զապթիաներին, որ մշեցոց տանեն կողպեն մի սենեակում, մինչև հեռագրի պատասխանը ստացուիլը, իսկ Ջողիկին երկու զապթիայի հսկողութեան ներքոյ տանեն յանձնեն ռուսի դաստատայի մեծաւորին, որպէս անգլիատգիր փախստականի։

Երկու զապթիան մօտեցան, որ Ջողիկին անջատեն խմբից։ Ջողիկը սկեսրայրի թևից բռնեց.—Ամեն, ինձ սպանի ու մի թողնի, որ տանեն, մոռանալով, որ իւր սկեսրայրը նոյնքան անճար է, որքան և ինքը։

—Գնա, գնա ոտներն ընկի, վրաց-վրաց ասաց շուարած Մադօն, հարսին հրելով առաջ և ինքն էլ նրան հետևելով։

Մադօն և իւր հարսը ընկան Թուրքի ոտները։

—Աղա, քեզի դուրբան, դա մի անուէր կին է, ուր դնայ, չի իմացել, որ հօլ թեսքերէսի է հարկաւոր. առաջ կինարմատից չէիք պահանջում, աղերսանքով ասաց Մադօն։

—«Օլմէս». այդ առաջ էր, այժմ այդպէս չէ պատասխանեց պաշտօնեան բարկացած։ Ահա և ինքը մեծաւորը, ասաց նա, ցոյց տալով հեռուից եկող մէկի վրայ։

Մադօն և Ջողիկը վեր կացան գնացին նոր մեծաւորին ընդ առաջ։ Դա մի փոքրիկ նիհար մարդ էր, երկար ծուռը քթով և նշաձև մաշուած աչքերով։ Նա նոր էր զարթնել և տանից նոր էր դուրս եկել դիւանատուն։

Նախին գետինը ձգեցին ու վրան կանգնեցին։

Ցերեկի, Թուրքը խուզարկելու էր եկել, բայց առաջ քան գործողութիւնն սկսելը, հարց ու փորձ արեց թէ մի զուցէ խուզարկող զապթիան մի բան էր իւրացրել նրանցից։

—«Ոչ», եղաւ պատասխանը։

—Ձշմարիտն ասացէք, եթէ մի բան վերցրել է, նա վաղիշայի հրամանով մեծ պատժի կ'ենթարկուի, շարունակեց Թուրքը՝ փոքրիկ աղուէսի աչքերն արագ-արագ շարժելով։

Հայերի պատասխանը դարձեալ բացասական եղաւ. դարևոր վորձերով նրանք քաջ գիտէին, որ Տաճկաստանում ճշմարտութիւն ասողն է պատժւում և ոչ յանցանք գործողը։

Թուրքը տեսաւ, որ հայի բերանում լօրի կըճրջուի, սկսեց իւր խուզարկութիւնը—«յանուն օրինաց», բայց նրանց գրպաններում բացի գրչադանակներից և մի քանի կտոր բրդէ թելերից ու փալասի կտորներից աւելի ոչինչ չգտաւ, ուստի շատացաւ նրանով, որ գրչադա-

Մադօն և Ջողիկը դրա ոտները էլ ընկան, բայց Մադօն դուշակելով, որ լոկ աղերսը քիչ կ՚օգնի, հանեց մի մեծ արծաթէ դրամ մէջիդէի, որ իւր բոլոր հոգեպահուստն էր և դրեց պաշտօնեայի բուռը։

Նա բոլորովին չվիրաւորուեց Մադօյի այդ յանդուգն վարմունքից, այլ հանդարտութեամբ իւր փոքրիկ սև բռնում դրած արծաթի վրայ նայեց և նոյնքան հանդարտութեամբ յետ տալով, շատ մեղմ ձայնով ասեց.

—«Ղուլ», որ ոսկի էլ տաս, ես չեմ կարող այդ անել. ես փադիշայի պաշտօնեայ եմ, ինձ հրամայուած է որ ոչ ոքի առանց անցագրի չը֊թողնեմ մեր երկիրը ոտք կոխի. եթէ ես այդ կնոջը, օրէնքի հակառակ, թողնեմ—իմ ձեռքերս այ, այս տեղից կըկտրեն, ցոյց տալով ձեռքերի կտրելու ճիշտ տեղը։ Ոսկի էլ որ տաս, ես ոչինչ չեմ կարող անել, հասկանում ես, «ղուլ», ոսկի փող։

«Ոսկի» բառի վրայ, պաշտօնեան առան ձին շեշտեց։

Մադօն չհասկացաւ այդ շեշտի նշանակութիւնը. միամիտ մշեցին, չնայելով այնքան դառը փորձերին, դեռ հաւատում էր, թէ մարդ է, կարելի է անկաշառ մէկն է, ով դիտէ և վերջապէս օրէնքի անունը Մադօյին պատկառանք ներշնչեց։

—Ադա, ապա կինարմատ է, մենակ ինց գնայ այդքան ճանապարհը, փորձեց նորից աղաչել Մադօն։

—Ղուլ, ասում եմ, որ մի դեպին ոսկի եթէ տաս, ես օրէնքի դէմ չեմ կարող գնալ, թէև տունս մի ոսկու էլ կարօտ է, կրկնեց մեծաւորը, որի ձայնում արդէն բարկութիւն էր լըսւում։

Մադօն այս անգամ էլ չհասկացաւ, թէև հասկանալը էլ, ճար չունէը նրան զոհացումն տալու, նրա եղած-չեղածը այդ մէջիդիէն էր։

Այս անգամ Ջողիկը փորձեց աղաչել, բայց մեծաւորը սաստիկ զայրացաւ և հրամայեց զապթիեաներին, որ Մադոյին մարակի հարուածներով տանեն խմբի հետ փակեն, իսկ Ջողիկի վրայ մի զննողական հայեացք զցելուց յետոյ, հրամայեց տանեն, իրրև փախստականի ռուսաց մեծաւորին յանձնեն։

Մադօն ուզեց վերադառնալ, հարսի հետ գնալ, բայց զապթիայի վճռական «օլմէսը» և բռնցի հարուածը անջատեց նրան Ջողիկից։

Մադօն այլ ևս չհամարձակուեց ձայն հանել, նրան տարան միւսների հետ կողպեցին մի տան մէջ։

Տաճիկ պաշտօնեան նրանց հեռանալուց, ատամների արանքովը շշնջաց՝—«գեաուրլէ՜ր»։

Շողիկին յանձնեցին գիւղի տանուտէրին, որ մի յոյն էր, որպէսզի մի քանի օր պահի նրան, մինչև որ Կովկաս գնացող մշեցիք հանդիպեն—նրանց յանձնի։

Տանուտէրն ընդունելով Ջողիկին, իբրև փախստականի և վախենալով որ չլինի թէ դա դարձեալ փախչի,—բարւոք համարեց գցել նրան մի խարխուլ տուն և դուռն ամուր կողպել։

Ջողիկի յուսահատութեանը սահման չկար. նա երկար ժամանակ ապշած կանգնած էր միայնութեան մէջ, այդ յուրտ տեղում։

Երեկոյեան նախրի ձայնը միայն նրան ուշքի բերեց. Ջողիկը յիշեց իրանց գիւղը, որ նա յոյս ունէը մի տասն օրից յետոյ տեսնել ու սկսեց դառնութեամբ լալ։

Աղջամղջին մուրթը շուտով վրայ հասաւ. լուսոյ այն միակ ցողը, որ պատի ճարիից ներս էր գալիս, անհետացաւ և Ջողիկի սրտի մէջ սկսեց վախ ընկնել. նրա չորս կողմը դժոզքի պէս սև էր։ Ջողիկը մօտեցաւ դռանը, մի քանի ժամանակ ականջ դրեց, կարծելով թէ ճրագ կըբերեն, բայց ոչ ոք չէը գալիս. կամաց կամաց դուրսը ամեն շարժողութիւն, ամեն ձայն դադրեց։ Գիւղը քնում էր։ Ջողիկը յուսահատութիւնից վճռեց դուրս գալ իւր բանտից. նա ուժգին քաշեց դուռը, դուռը մի քիչ առաջ եկաւ, բայց չբացուեց. նա դռան ճեղքով երկու մատը անցրեց, կարծելով թէ կարող է բանալ. բայց զարհուրելով տեսաւ քաշ արած մի ահագին կողպէք։

Ջողիկի յուսահատութիւնը իւր գագաթնակէտին հասաւ. երկիւղը պատեց նրա սիրտ ողջ հոգին, մազերը փշաքաղուեցին։ Նա զգում էր, որ եթէ այդ տեղից դուրս չգայ, կարող է խելագարուել. նա մէկ էլ քաշեց դուռը, յուսալով թէ խեղճուտ դուռը կըկոտրուի, բայց դուռը դիմադրեց նրա նուազած ոյժերին և Ջողիկը գըլխին ու ծնկներին տալով ուժասպառ ճկուեց դռան տակին։

Նրա վերին աստիճանի լարուած նեարդերը տեղի տուին ջլատման և Ջողիկը ընկաւ մի տեսակ թմրութեան մէջ։

Մկների վազվռտիլը միայն մերթ ընդ մերթ

արթնութեան էին բերում Զողիկին, նրա սիրտը տրոփել էին տալիս ու նա սոսկափած, աչքերն ու ականջները լարած մի քանի րոպէ ականջ էր դնում և յետոյ ինքն իրան հանգստացնելով ասում էր՝ «խաչապաշտի երկրում եմ, ինձ վնաս չի գալ», և դարձեալ ընկնում էր թմրութեան մէջ։

Մի քանի անգամ Զողիկի յոդնած կոպերը իջան, նա ննջեց, բայց սաստիկ ցուրտը թոյլ չէը տալի որ քնի և նա, ատամները միմեանց տալով, աւելի և աւելի էր կծկւում. վերջապէս լուսադէմին նրա գլուխը կրծքին խոնարհուեց և ինքը գլորուեց խոնաւ գետնի վրայ ու քնեց... Զողիկն արդէն իւր գիւղումն էր, կրակ էր անում որ քաղցրիկ ճժերի համար կաթ տաքացնի, երբ մի հարուած զարթեցրեց նրան։ Տանուտէրն էր, որ դուռը բանալիս դիպցրեց Զողիկին։

Խեղճ կինը աչքերը սրտրելով վերկացաւ տեղից։ Տանուտէրի յետևից մտաւ մի հայ, որ հրաւիրեց Զողիկին հետևել իրան։

—Ա՛խ, մեռնեմ Աստուծոյ զօրութեան, ես կարծում էի թէ այս գիշերը անշուշտ կը մեռնեմ և այլ ևս հայի ոչ երես կըտեսնեմ, ոչ լեզու կըլսեմ, ասեց Զողիկը, աչքերը դէպի երկինք բարձրացնելով և գնաց այդ հայի տունը, որ միակ հայն էր այդ գիւղում։

Ներս մտնելուց նա մէկ էլ փառք տուեց Աստծուն։

—Ջոյրս, կըմնաս մեզ մօտ Աստծու հիւր, տեսնենք ինչպէս ենք կամ դէսը կամ դէնը ճանապարհ գցում քեզ, ասեց հայը և պատուիրեց իւր կնոջը, որ խնամք տանի Զողիկին։

III

Օրը թեքւում էր դէպի երեկոյ։ Արեգակը իւր վերջին ճառագայթներով լուսաւորում էր բնութիւնը կարմրագոյն լուսով։

Բաղէշից դէպի հարաւ-արևմուտք՝ սարերի միջով, ոլոր-մոլոր նեղ շաւղով գնում էին մի կին և մի մարդ։ Կինը Զողիկն էր։ Նա մի ամբողջ շաբաթ ծայրայեղ յուսահատութեան մէջ սպասում էր թէ որտեղ որ է իւր սկեսրայրը կը գայ կըտանի դէպի հայրենիք, բայց... ո՛ գիտէ, ո՛ր գանլի դարայի (արեան կիրճ) մէջ նրան սպաննեց քրդի գնդակը։

Այդ օրերը շարունակ գալիս էին պանդուխտները, խումբ-խումբ անցնումահմանը՝ հայրենիք երթալու։ Այդպիսի մի խմբի մէջ գտնուեց Զողիկի հասակակից մի կտրիճ երիտասարդ, որ լսելով նրա ամեն դրութիւնը, յանձն առաւ սարերի միջով, գաղտուկի անցկացնել Զողիկին և տանել-հասցնել իրանց գիւղը։ Ահա այդ երիտասարդի հետ էր, որ Զողիկը գնում էր։

Ճանապարհորդները, հարկաւոր էր մի բլուր միայն բարձրանային, որ գիւղը տեսնէին։ Զողիկի ոտները բոլորովին մերկ, առանց սօլերի, հազիւ-հազ էին շարժւում քարերի միջով, նա շուտ-շուտ կանգ էր առնում, ոտի տակից մի փուշ հանում և շարունակում ճանապարհը արենլուիկ ոտներով։

—Ձուտ կըհասնինք մեր գիւղը, հարցնում էր նա մէկ-մէկ իւր ուղեկցին։

—Իսա, այս բլուրը որ բարձրանանք, մեր գիւղը կըտեսնենք, արևը չնստած, մենք տուն կըհասնինք, պատասխանում էր երիտասարդը։

Երիտասարդը սխալուեց. երբ նրանք բլրի գագաթը բարձրացան, արեգակը արդէն կիսով չափ մայր էր մտել և սարի ստորոտն ու դաշտը ծածկուել էին կապոյտ ստուերով։

—Մեր գիւղը ո՞րն է, հարցրեց Զողիկը, մի խոր հառաչ քաշելով։

—Է՛ն, տեսնում ես, այնտեղ հեռու, որ սպիտակին է տալիս.—էն է, ասեց երիտասարդը, ձեռքը մեկնելով։

Զողիկի երեսը փայլեց և ձեռքով աչքերը հովանաւորելով, նայեց մի քանի վայրկեան, յետոյ ասեց.

—Էն մեր գիւղն է, կարծես քարի կոշտեր լինին, շէնքի նմանող այնտեղ բան չկայ։

—Հեռու է, այնպէս է երևում, պատասխանեց երիտասարդը։

Մի քանի րոպէ հանդստութիւն առնելուց յետոյ սկսեցին իջնել դաշտը։

Զողիկն աչքը չէր հեռացնում իւր գիւղից, բայց քանի մօտենում էր, այնքան աւելի քարակոշտերի տպաւորութիւն էր անում այն տեղը, ուր գիւղն էր հնթադրում։

Երբ որ նրանք այնքան մօտեցան, որ ամեն բան պարզ երևում էր, նրանք միաձայն բացականչեցին.

—Վա՛յ, մեր գիւղն ամայացել է։

Զողիկն այրերը լայն բացած, զունատ, քարացած կանգնեց, իսկ երիտասարդը, որին ձը-

գում էր շտապօք սէրը, օրօրուելով առաջ էր գնում Ձողիկին խրախուսելով՝ «գնանք, գնանք, տեսնենք մեր ճարը ինչ է լինում»։

Ձողիկը հետևեց նրան, կրկնելով բոլոր ժամանակ՝ «մեր գիւղն ամայացել է, ճժերս կոտրել են. ա՛խ ճժերս, վա՛խ ճժերս»։

Ձողիկը գլխին տալով «Տիգրա՛ն» «Փարֆո՛ւր» աղաղակելով որոնում էր այն տեղը, ուր պէտք է լինէր իւր օջախը։

Ըրեգակի վերջին ճառագայթն անհետացաւ։

Ձողիկը գլխի ծածկոցը պատառոտած, մազերը գլխին ցրուած, կրծքին տալով դուրս եկաւ գիւղից և ընկաւ շրջակայ դաշտերը... «Տիգրա՛ն, Փարֆո՛ւր, ճժերս, ո՛ւր էք»...

Գիշերային սարսափելի լռութեան մէջ, դեռ երկար ժամանակ Ձողիկի դերմարդկային ձիչը լսւում էր անապատի տարածութեան մէջ. նա անդադար կանչում էր՝ Տիգրա՛ն, Փարֆո՛ւր, յուսալով որ նրանք դեռ կենդանի են և արձագանք կըտան իրան... Բայց ո՛չ, ոչ մի յոյս չունէր նա. Նա կանչում էր, որովհետև իւր կորած զաւակների անուններն էր ուզում միշտ լսել։ Ձողիկը խելագարուել էր։

Մարգարիտ.

(Պայազատեան-Նաւասարդեան)

1896 թ. յունուարի 6.

ՄԵՆՔ ՊԷՏՔԷ ԶԳԱՆՔ.

Մենք պէտք է զգանք ազատ, համարձակ,
Եւ ոչ թէ ներհնենք դարաւոր ճնշով.
Մենք պէտ է ծնենք որոշ ու կայծակ,
Զայրոյթի շանթեր՝ վշտի երկունքով։

Ով գիտէ զգալ—ազատ է նա միշտ,
Չեն ընկճի նորան հալածանք եւ վիշտ.
Նա բարձր պահած դրօշ արդարութեան
Կուի դուրս կը գայ դէմ անխղճութեան։

Չգացմունքն է մայր արդար բողոքի
Ընդդէմ գազանի եւ անողոքի.
Նա է վիշտ ծնում վրէժ ու տենչանք,
Նա է պարգեւում սիրտ, հոգի եւ կեանք...

Գարուրիւճ Պետրոսեան.

Զ Ա Ր Մ Ա Ճ Ա Ի Ս Ա Ն Ն Ի Կ Ը

(Մանկական թատրոն ևրեք արարուածով)

ԱՐԱՐԻԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Վարագոյրը բարձրանալիս տ. Արտեմիսը նստած Գոհարիկի համար շոր է կարում, իսկ Գոհարիկը ուշադրութեամբ նայում է մօր կարելուն։ Անգիկը սենեակի մի անկիւնում տիկնիկ է խաղում։

.....

Արտեմիս, Գոհարիկ եւ Անգիկ

Տ. Արտեմիս։ *(Չվերչացրած տեղերը գնդասեղներով նշանակում է եւ տալիս է Գոհարիկին)։* *Ահա, Գոհարիկս, գնդասեղներով նշանակած տեղերը պէտք է կարել, վերջացնել. դու կարիր, իսկ ես գնամ խմորեղէն պատրաստեմ, որ հետդ տանես մօրաքրոջդ։* (Մայրը դուրս է գնում, իսկ Գոհարիկն սկսում է կարել)։

Լեւոն։ *Գոհարիկ, հայրիկը քեզ կանչում է, գնանք։*

Անգիկ։ *Ես էլ գամ։*

Լեւոն։ *Ո՛չ, միայն Գոհարիկին է կանչում։ Չուտ արա, գնանք։*

Գոհարիկ։ *Իսկոյն, եղբայրս։* *(Կարդ դնում է սեղանի վրայ եւ դիմում Աննիկին)։* *Աննիկ, հոգիս, կարիս ձեռք չտաս։*

Անգիկ։ *Քո կարին ես ինչո՞ւ պէտք է ձեռք տամ, ես իմ տիկնիկիս հետ եմ խաղում։*

(Լեւոնն ու Գոհարիկը դուրս են գնում)։

Անգիկ *(Խօսում է տիկնիկի հետ)*։ *Աըի, սիրելիս, ախր գօտիդ կապեմ... վայ, նոր չէր որ սանդրեցի գլուխդ... մազերդ ինչո՞ւ է այսպէս ցցցւած։* *(Ուղղում է տիկնիկի մազերը։ Կամենում է տիկնիկի գօտին կապել, բայց չի կարողանում)։* *Չգիտեմ ինչպէս կապեմ... գնամ Գոհարիկի շորին նայեմ, տեսնեմ ինչպէս է կապել մայրիկը։* *(Մօտենում է Գոհարիկի շորին)։* *Քոյրիկիս ասացի որ կարիդ ձեռք չեմ տալ, հիմա ինչպէս անեմ, որ կարը չխառնեմ և գօտին լաւ կապեմ։* *(Ձեռքը մեկնում է դեպի կարը, բայց իսկոյն էլի յետ է քաշում)։* *Չէ, վախենում եմ կարը խառնեմ... Ա՛խ, երանի առանց ձեռը տալու կարողանայի տեսնել, թէ մայրիկն ինչպէս է կապել... բայց ոչինչ ես զգոյշ կընայեմ...* *(Շրկիւղով քարձրացնում է կարդ թէ չէ, ոտի ձայն է շառում)։* *Վա՜յ, գալիս է Գոհարիկը... (Կարդ վայր է գցում, որից բարիում են գնդասեղները)։* *Ա՛խ, այս ինչ եղաւ... (Հառաչում է եւ սկսում արտացնել, բայց աւելի է խառնում)։* *Այս ինչ արի... (Մի րոպէ լռում է շառաչած, ապա կարդ վայր է գցում, շտապով գնում իր տեղը նստում եւ տիկնիկը ձեռքն առնում)։* *Արդեօք ինչ ասեմ, երբ Գոհարիկը հարցնի...*

(Մտնում է Գոհարիկը)։

Գոհարիկ *(Մօտենում է կարին, երբ ուզում է վեցնել, լսում է ապշած)*։ *Կարս ինչո՞ւ է այսպէս խառնուած... վա՜յ, վա՜յ... բոլորը գնդասեղները դուրս են եկել տեղից. էլ ես ինչպէս կարեմ... հիմա մայրիկը կըզայ, ինչ ասեմ նրան։* *(Գոհարիկը սկսում է գնդասեղները իրանց տեղը դնել, իսկ Անգիկը սկսի տակով Գոհարիկին է նայում ու հետն էլ այնպէս է ցոյց տալիս թէ ուշադրութիւնը տիկնիկի վրայ է)։*

(Ներս են մտնում տ. Արտեմիսն ու Լեւոնը)։

Տ. Արտեմիս (*կարին նայելով*)։ Վերջացրիր, աղջիկս։

Գոհարիկ։ *Մայրիկ ջան, հէնց դու գնացիր թէ չէ, Լևոնը եկաւ ասաւ՝ հայրիկը կանչում է. գնացի, բայց երբ վերադարձայ, տեսայ կարը խճճւած, գնդասեղները նշանակածդ տեղերից թափւած, այդ պատճառով էլ չկարողացայ կարել։*

Տ. Արտեմիս։ *Էլ ինչ ասել կուզի, որ Աննիկի անհամբերը մատներն են դիպել կարիդ։*

Աննիկ (*Ոսկոյն վեր է թոչում տեղից ու երկիւղով մօտենում մօրը*)։ *Ո՛չ, մայրիկ ջան, ես... ես ոչինչ չեմ արել. միայն երբ Գոհարիկը գնաց, ես շատ չարչարւեցի որ տիկնիկիս գօտին կապեմ, չկարողացայ... Մօտեցայ կարին, որ տեսնեմ թէ Գոհարիկի գօտին ինչպէս ես կապել. այդ ժամանակ անպիտան փիսօն ներս գալով մօտեցաւ տիկնիկիս և սկսեց հետը խաղալ, ես էլ կարը վայր գցեցի ու վազեցի, որ չթողնեմ։ Յետոյ եկայ ու ինչքան աշխատեցի, որ գնդասեղները իրանց տեղը ամրացնեմ, չկարողացայ...*

Տ. Արտեմիս (*Լրջօրէն*)։ *Աննիկ, բաւական չէ որ դու ամեն տեսակ չարութիւններ ես անում և ամենքիս վէշտ պատճառում, դեռ սուտ էլ ես խօսում... Ամօթ չէ, Աննիկ, մի՛թէ չգիտես, որ ամենավատ բանն է սուտ խօսելը։ Բայց ես քեզ զգուշացնում եմ, որ եթէ այսօրւանից սկսած դու ձեռք չքաշես այդ քո վատ սովորութիւնից և համարձակւես կրկին սուտ խօսել, դրա համեմատ էլ խիստ պատիժ կըստանաս... Դէ, ինքդ ասա, լաւ արիր, որ քրոջդ գրկեցիր ուրախութիւնից. չէ՞-որ այս երեկոյ նա պէտք է այդ շորով գնար մօրաքրոջդ տուն, Աբամի տօնախմբութեանը։ Արդէն ուշ է, էլ ի՛նչ կարող ենք վերջացնել։*

Աննիկ (*Արտասուքն աչքերին*)։ *Մայրիկ ջան... Ներքիը... (շաշով) էլ.. էլ .. չեմ անիլ. այս անգամ Ներքիը ինձ... դու էլ Ներքիը, քոյրիկ ջան. (շարունակում է շալ)։*

Լեւոն (*Մօտենալով Աննիկին*) *Աննիկ, մի՛թէ այդպէս շուտ մոռացար նկարները. դու այն ժամանակ էլ լալով ներողութիւն խնդրեցիր և խոստացար այլևս այդպէս բան չանել. քեզ չպատկանած բանին ձեռք չտալ։ Ուրեմն ինչ օգուտ ներելը, երբ դու միշտ մոռանում ես քո խոստումը։ Դու մոռանում ես որ մայրիկին ու հայրիկին էլ ես մեծ վիշտ պատճառում, երբ նրանք ստիպւած են լինում քեզ ամեն անգամ նկատողութիւն անել կամ պատժել քո արած սխալների համար։* (*Գոհարիկը տխուր նայում է շաղող Աննիկին*)։

Տ. Արտեմիս։ *Աննիկ, լսեցիր եղբօրդ ասածները. այսուհետև լաւ մտածիր արածներիդ վրայ։ Դէ, հիմա գնանք սեղանատուն։*

Մայրը գնում է, երեխաները տխուր եւ գլխակոր հետեւում են նրան։

ՎԱՐԱԳՈՐ

ԱՐԱՐՒԱԾ ԵՐԲՈՐԴ

Բեմը նոյն սենեակն է ներկայացնում։

Արտեմիս, Լեւոն, Գոհարիկ, Աննիկ։

Տ. Արտեմիս (*Դիմելով նրանց*)։ *Ինձ այնպէս է թւում, թէ մեր չարաճճի Աննիկը խելքի է եկել—մի քիչ խրատւել է և իրան լաւ է պահում. այնպէս չէ։*

Լեւոն եւ Գոհ. *Այո, մայրիկ ջան, նա էլ առաջւայ պէս չէ. այժմ բաւական փոխւել է։*

Տ. Արտեմիս։ *Տար Աստած որ այդպէս լինէը։*

(Ուրախ տրամադրութեամբ ներս է մտնում Աննիկը)։

Աննիկ (*Փարելով մօր վզովը*)։ *Մայրիկ ջան, մի բան ասեմ...*

Տ. Արտեմիս։ *Ասա, հո՛գիս։*

Աննիկ։ *Մայրիկ ջան, երբ պէտք է գնանք մեր հեռու մեծ այգին։*

Տ. Արտեմիս։ *Հէնց վաղը, սիրելիս, եթէ ուզում ես. վաղն էլ կիւրակի է. եթէ լաւ եղանակ լինի, գնանք։*

Գոհարիկ։ *Իրա՛ւ, մայրիկ ջան... ո՜, ինչ ուրախութիւն...*

Տ. Արտեմիս։ *Ես այսօր ուտելուց պատրաստութիւն կըտեսնեմ, իսկ դուք էլ ձեր հագնելիք շորերի, չմոռանաք նաև դասերդ պատրաստել։*

Լեւոն։ *Հայրիկն էլ կըզայ մեզ հետ։*

Տ Արտեմիս։ *Ո՛չ, դժւար թէ գայ, նա կարծեմ վաղը կարևոր գործ ունի։*

Գոհարիկ։ *Երանի թէ հայրիկն էլ կարողանար գալ. նա ճանապարհին միշտ հետաքրքիր պատմութիւններ է անում։*

Տ. Արտեմիս։ *Մի անգամ էլ հայրիկի հետ*

միասին կ'երթանք. այսուհետև շուտ-շուտ կերթանք. եղանակները լաւանում են։ (Վեր է կենում տեղից, վիրանի խայղ անում դէպի դուրը եւ յետ դառնում երեխաից մօտ)։ Ձմռանը ձեր վերարկուները ևս վերցնելու. երեկոյեան վերադառնալիս հով կը լինի, չմրսէք։

(Դուրս է գնում)

Գոհարիկ։ *Ո՜րքան ուրախ եմ, որ պէտք է այդի գնանք վաղը. որտեղից միտքդ ընկաւ, Ա՛ննիկ։*

Ա.ննիկ։ *Պարտէզում խաղալիս յանկարծ միտքս ընկաւ ու վազեցի մայրիկին ասացի։*

Լեւոն։ *Ես էլ շատ ուրախ եմ։*

Ա.ննիկ։ *Հապա ես... ախ, երանի հիմա այնտեղ լինէինք. ինչ պէտք է մ.ինի, յետոյ լուսանայ, որ նոր գնանք։*

Լեւոն (*Յանդիմանօրէն*)։ *Էլի քո անհամբերութիւնը մէջ բերիր։*

Ա.ննիկ։ *Ո՛չ, Ո՛չ, սխալւեցի, ես ուրախութեամբ կը համբերեմ։*

Լեւոն։ *Լաւ որ յիշեցի, մեր այգու տակով անցնող գետի ձուկը շատ համեղ է, ձուկ որսալու կարթեր կը վերցնեմ։*

Ա.ննիկ։ *Ո՜ւռ... ինչքան պէտք է վազվզեմ դաշտում... Ես այնտեղի գեղեցիկ ծաղիկներից մի լաւ փունջ կը պատրաստեմ և կը բերեմ հայրիկի համար։*

Գոհար (*Դիմելով Լեւոնին*)։ *Լեւոն ջան, հիմա գնանք դասերս պատրաստենք։ Գիտես, ես շատ դաս չունեմ միւս օրւայ համար։*

Ա.ննիկ։ *Ես էլ շատ քիչ դաս ունեմ սովորելու։*

Լեւոն։ *Դու դասի մասին մոռացել գիտես. քոնն այն է, տեսնես, որտեղ ինչ է արգելւում, գնաս ձեռք տաս, փչացնես...*

Գոհարիկ։ *Դէ, գնանք, Ա՛ննիկ։*

(Լեւոնն ու Գոհարիկը գնում են)։

Ա.ննիկ (*Մենակ*)։ *Հիմա ինչպէս անեմ, որ մինչև վաղը որևէ անախորժ բան չանեմ և մայրիկին չբարկացնեմ... Ո՛չ, ո՛չ, կ'աշխատեմ ոչինչ չանել... իսկ հիմա գնամ դասերս ու շուրերս պատրաստեմ։ (Ծափ է տալիս, վեր-վեր թռչում)։ Ա՛խ, ինչպէս ուրախ եմ, ինչպէս ուրախ եմ։*

(Երգելով դուրս է գնում)։

Տ. Աւետիս (*Ներս է մտնում եւ ձեռի զանազան իրերն ու մի սարկղիկ դնում սեղանի վրայ*)։ *Ձիշտ է, Աննիկս բաւական խելօքացել է, բայց չեմ հաւատում, որ բոլորովին ուղղւած լինի։ Վաղը մեր այգի գնալը շատ լաւ առիթ է. անհրաժեշտ է փորձել։ Եթէ այս անգամ էլ չլսի ասածս, ասել է՝ պէտք է տանը թողնել անպատճառ։ Հարկաւոր է մի անգամ լաւ պատժել, քանի որ ուրիշ հնար չկայ նրան ձեռք վեցնել տալու իր անհամբեր բնաւորութիւնից։*

(Երեխաները ուրախալի աղմուկով ներս են գալիս՝ ո՛րը մօր ձեռին է համբուրում, ո՛րը երեսը)։

Երեխաները (*միասին*)։ *Մայրիկ ջան, շո՛ւտ կերթանք։*

Տ. Աւետիս։ *Այո, իմ սիրելիք, միայն մի փոքր համբերեցէք, յոգնած եմ. ես գնացել էի ձեզ համար գնտակ ու խաղալիքներ գնելու...*

Ա.ննիկ։ *Գնամ Կարապետին ասեմ ձիերը լծի, հա, մայրիկ։*

Տ. Աւետիս։ *Ո՛չ, դեռ սպասիր, համբերել իմացիր. ասացի որ յոգնած եմ, ապա հարկաւոր է մի քիչ բան ուտել, յետոյ ճանապարհուել։ Նո՛ւ խաղալիքները։ (Ամեն մէկին մի բան է տալիս)։*

Երեխաները (*միասին*)։ *Շնորհակալութիւն, մայրիկ ջան։*

Ա.ննիկ (*Նկատելով արկղիկը*)։ *Մ՛յս ինչ է, մայրիկ, այս էլ պէտք է տանենք հետներս։*

Տ. Աւետիս։ *Ո՛չ, սիրելիս, այդ ձեզ հարկաւոր բան չէ, այժմ ուշանում ենք, գնանք նախաճաշենք, այդ յետոյ էլ ցոյց կը տամ։ (Տ. Աւետիսը գնում է դէպի սեղանատունն, երեխաները խաղալիքները ձեռքերին հետեւում են նրան։ Աննիկը միտքի անգամ յետ է նայում եւ հետաքրքիր հայեացք գցում արկղիկի վրայ)։*

Ա.ննիկ։ (*Զգուշութեամբ ներս է մտնում դահլիճի դռնից եւ մօտենում սեղանին, որի վրայ արկղիկն է դրած*)։ *Երանի գիտենամ ինչ կայ այս արկղիկի մէջ... Եթէ բանամ տեսնեմ, ով կիմանայ Թէ բաց եմ արել... Ի՞նչ կ.ինի, եթէ արկղիկի ծածկոցը մի...ի...ր քիչ (ցոյց տալով մատի ծայրը) շատ քիչ բարձրացնեմ... մայրիկն ինչ կ'իմանայ... (Մտածմունքի մէջ է ընկնում)։ Բայց ո՛չ, ո՛չ... չէ որ մայրիկին խաբած կը լինեմ, իսկ խաբելը շատ վատ բան է... ո՛չ, չեմ բանալ .. Ա՛խ, ինչպէս սպասեմ մինչև*

*այգուց վերադառնալը, իսկ այժմ սիրտս ուզում է իմանամ թէ ինչ կայ միջին։ (Սաստիկ հետաքրքրութիւնից չգիտէ ի՛նչ անէ. մօտենում է արկղիկին եւ մէկ էլ երկիւղով յետ փաչում. կրկին մօտենում է, ականջ դնում եւ էլի երկիւղով յետ փախչում)։ Գարծես արկղում ինչ-որ չըթչըթում է... Ախ, ինչպէս կ'ուզէի իմանալ, թէ այդ ինչ է... Միքիչ, այ այսքան (ձեռով ցոյց է տալիս) բարձրացնեմ ծածկոցը. (ինչ բարձրացնում է)։ Ոչինչ չեմ տեսնում։ (Աւելի է բարձրացնում, բայց արկղի միջից մի ծխ է դուրս թռչում։ Անիկը սարսափած դէս ու դէն է վազվզում կամենալով ծխին բռնել եւ երբ չի կարողանում, բազուկները մեկնում է դէպի ծխն ու աղերսում)։ Ծիտիկ ջան, իմ սիրուն ծիտիկ, հոգուտ մատաղ, ախր էլի մտիր արկղի մէջ. խղճա ինձ, ես մեղք եմ, մայրիկը կըբարկանայ։ Ես խոստացել էի չարութիւն չանել, անհամբեր չլինել, բայց չկարողացայ համբերել, հիմա ինչ ասեմ, ամաչում եմ աղաջիս վրայ... Ախր, ի՛մ անուշիկ ծիտիկ, լսիր ինձ... (Նորից աշխատում է բռնել ծխին, բայց չի կարողանում)։ Ա՛խ, ինչ անեմ, որ կարողանամ բռնել... (Բարձրանում է աթոռի վրայ եւ նորից աղերսում)։ Ախր, ծիտիկ ջան, ախր. հաւատա՝ քեզ ոչինչ չեմ անիլ. խոստանում եմ ամեն առաւօտ հատիկներ ու հացի փշրանքներ դնել լուսամուտի առաջ, որ դու ուտես։ (Բոլորովին յոգնած եւ յուսահատ մնում է շուարած կանգնած) Ծիտիկ... դէ, ախր, է՛...։

(Մտնում են մայրը, Լեւոնը եւ Գոհարիկը)։

Տ. Աստեմիս, Լեւոն, Գոհարիկ եւ Անիկ (*հագնըւած*)

Լեւոն։ Աննիկ, մենք արդէն պատրաստ ենք, իսկ դու ինչ ես անում։

Անիկ։ (*Տեսնելով մօրը, իսկոյն իջնում է աթոռից, ընկնում մօր ոտքերը եւ հեկեկում*)։

(Լեւոնն ու Գոհարիկը զարմացած նայում են)։

Տ. Աստեմիս (*Տեսնելով բաց արկղիկը*)։ Աննիկս, ես այնպէս էի կարծում թէ դու ուզելել ես, բայց այժմ տեսնում եմ որ դու էլի առաջւայ անհամբեր աղջիկն ես։ Միայն չկարծես թէ այս անգամ էլ կընեղեմ. ոչ, այլեւս դու արժանի չես, որ քեզ նեղեմ։ Ես յոգնեցի քեզ նկատողութիւնները անելով ու զզուշացնելով շարունակ։ Ի՛նչէ. մենք ուշանում ենք, գնանք, Լեւոն, Գոհարիկ, իսկ սա թող այսօր մենակ մնայ տանը և մտածի իր վատ սովորութիւնների վրայ. գուցէ ինքը զգայ իրա սխալները և ուղղւի։ (Անիկը դառնագին լաց է լինում) Ինչքան ուզում ես լաց եղիր, բայց այդ քեզ չի օգնիլ. դու ոչ միայն ինձ վշտացրիր, այլ երբ հայրիկդ էլ տուն գայ ու քեզ տեսնի տանը, նա աւելի ևս պէտք է վշտանայ, և այս ամենը քո անհամբեր բնաւորութեան երեսից։ (Դիմելով միւսներին։) Դէ՛, գնանք, զաւակներս, կառքը պատրաստ մեզ է սպասում։

Անիկ։ (*Վազելով դէպի մայրը։*) Մայրիկ ջան, ներիր, որ առանց քեզ հարցնելու արկղիկը բաց արի... սխալւեցի, ներիր... ես շատ քիչ բարձրացրի, ես չգիտէի թէ այնտեղ ծիտ կայ... յետոյ այնքան խնդրեցի, այնքան աղաչեցի ծիտիկին, որ գայ կրկին արկղը մտնի, բայց նա չլսեց ինձ ու չեկաւ... (Լաց է լինում։)

Տ. Աստեմիս։ Դու որ երեխայ չես, այլ արդէն ուսումնարանի աշակերտուհի, խօսել գիտես, ուրիշների ասածները հասկանում ես, բայց շարունակ լսածներիդ ու խոստումներիդ հակառակն ես անում, հապա նա իր թռչուն տեղովը՝ որ ոչ խօսել կարող է, ոչ էլ լսածները հասկանալ, ինչպէս էիր ուզում որ նա քեզ լսէր։ Դու խնդրեցիր այգի տանել, ես խնդրող կատարեցի, արկղի համար հարցրիր, ասացի այդ յետոյ ցոյց կըտամ, իսկ դու համբերութիւն չունեցար մի փոքր սպասելու. այժմ ինչպէս ես ուզում որ ես քեզ ներեմ։ (Լեւոնին ու Գոհարիկին։) Գնանք, սիրելիք։

Գոհարիկ։ Մայրիկ ջան, ներիր Աննիկին, առանց նրան տխուր կըլինի մեզ համար այնտեղ։

Տ. Աստեմիս (*խստութեամբ։*) Ո՛չ, անկարելի է. քանիքանի անգամ եմ ներել, և սակայն նա չվրաւեց, նա իմ բարութիւնս միշտ ի չարն է գործ դնում։ Հիմա մնալով տանը, գուցէ մտածի, թէ որքան վատ բան է անհամբեր լինելը։ Դէ գնանք, ուշանում ենք։ (*գնում են*)։

(Լեւոնն ու Գոհարիկը մի տոպէ կանգ են առնում, տխրութեամբ նայում Անիկի վրայ եւ տխուր, գլխակոր դուրս գնում։ Անիկը ձեռքերով երեսը ծածկած հեկեկում է։)

ՎԱՐԱԳՈՑ

Or. Նաս. Գրիգորեան

Ի՞ՆՉ ԱՆԵՄ՝ ՈՐ ՀԱՅ ԾՆՈՂ ԱՂՋԻԿ ԵՄ

I

Հրաճեշ

Գիտէք նորութիւն, կրթեալ Հայ աղջիկ,
Վաղուցեան մոռցած մեր սուրբ Հայրենիք
Ինքնաճանաչման պիտակից ջանքով
Նորոգւելու է. կարծես, չատ չուտով։

Վասկուհի

Ի՞նչ անեմ, պարոն, մինչ կարծում էք,
Այդ խարուսիկով ինձ կուրախացնէք,
Դէպ՝ այդ խարսերը խիստ անտարբեր եմ,
Դառն փորձերի երկանց ծընունդ եմ.
Ի՞նչ անեմ՝ որ Հայ ծնւած աղջիկ եմ։

Հրաճեշ

Բայց դիտէք, ազնիւ—չքնաղ Հայուհի,
Որ ձեր ազգ, կըրօն և եկեղեցի.
Մոռցած Հայրենիք սիրուն Եդեմում
Հայ աղջկան մէջն է յոյսեր փայփայում։

Վասկուհի

Չուր են այդ յոյսեր,
Չուր են այդ յոյսեր.
Լոկ ցընորք—երազ,
Որի հիմքն՝ աւա՜զ...
Իմ ազգն ստիպւած արհամարհում եմ.
Ի՞նչ անեմ՝ որ Հայ ծնւած աղջիկ եմ։

Հրաճեշ

Հայոց լըրագիր, թատրոն, դըպրոցներ,
Բարեգործական հաստատութիւններ,
Մայրենի լեզւի հընչիւն սիրագրաւ՝
Չին հետաքրքրում մինչ ձեզ բնաւ։

Վասկուհի

Ձարմանք է, պարոն, որ Հայք տակաւին
Սիրում են հըրճւիլ լոկ փառքով նախկին.
Նետւում են շատ բարձր ամպեր մագըլ-
ցել,
Ապաչերտերում օդամրոց կերտել...
Ակամայ թէև՝ բայց միշտ զզւել եմ.
Ի՞նչ անեմ՝ որ Հայ ծնւած աղջիկ եմ։

Հրաճեշ

Մինչ ցակալի Հայրենեաց մասին
Խօսելը ծանր է ձեր քնքուշ սրտին,
Չէ ձեզ Հայ արգանդն է երկնել-ծընել,
Եւ սուրբ ըստինքով Հայուն էք սընուել։

Վասկուհի

Ըրկայ Հայրենիք՝ ոչ փառք ցանկալի,
Եւ ուր է արգանդ կամ ըստինք Հայի—
Օտար է բոլոր,
Եւ ամէն ինչ՝ նոր.
Նորից՝ ոչ մի լաւ. հընից՝ խարուսիկ
Ցընորք-յոյսերի չուքին խաղալի՜ք...
Այս ամէնն վրհատ հոգւով տեսնում եմ
Եւ քինչպէս իմ ազգ ես սիրեմ, պաշտեմ,
Ի՞նչ անեմ՝ որ Հայ ծնւած աղջիկ եմ։

Հրաճեշ

Բայց մինչ մի օր, մի ժամ, մի րոպէ
Մայրենի նաներգն ձեզ չէ փայփայէ,
Եւ չըթունքներդ բաց-խըփիկ ծըրար
Մինչ չէ թոթւէ մայրենին բարբառ։

Վասկուհի

Թէ չըկայ արգանդ և ըստինք Հայի՝
Ըրկայ ուրեմն և լիզու Հայի։
Օտարախօս է Հայը ազգովին,
Օտարաչունչ է նա ողջ գլխովին,
Օտարասէր է, օտարակաց է,
Վաղուց նա իւր ես ն ոտնակոխած է,
Աւում է նա միշտ իւր-ը սեպհական,
Ձըգտում է հասնել չուտ օտարացման...
Հային՝ որ ձըկտում է այլասեռ ման՝
Սիրել կարող չեմ.
Ի՞նչ անեմ՝ որ Հայ ծնւած աղջիկ եմ։

Հրաճեշ

Ձեմ կարծում, ազնիւ դուք Հայի աղջիկ,
Որ ճիշտ լինէին ձեր բոլոր կարծիք.
Երևի դուք ինձ փորձում էք այսպէս՝
Տեսնել-համոզմամբ սրքան պինդ եմ ես։

Վասկուհի

Օտարոտի է բոլոր ձեր կարծիք,
Ձունիմ փորձելու և ոչ մի կարիք,
Ես ինձ Հայ կոչել՝ պարզ ամաչում եմ.
Ի՞նչ անեմ՝ որ Հայ ծնւած աղջիկ եմ։

Հրաճեշ

Դէթ ձեր ծընողին խղճացէք, աղջիկ,
Ցիչէք դէթ նոցա ձեզ արած բարիք.
Նոքա ծրնել են ձեզ Հայի աղջիկ.
Եւ ոչ օտարի՝ գրկին խաղալիք։

Վասկուհի

Ձեմ մերժում ծընող, պաշտում եմ նորան,
Ծրնուայ Հայ աղջիկ, բայց տեսցի Հայն։
Հայը չը սիրեց բընաւ իւքն իրան,
Իր փառքը դըրաւ օտարին կոխան.
Նա խալիչայից ցեխը գըլորւեց,
Ցեխի մէջ միայն հաճոյքը փնտռեց,
Իր պատիւ-անուն՝ ի՛նքը ցեխոտեց,
Օտարի վատին ըշտաղ ագահեց,
Սեպհական լաւին աքացի տըւեց,
Օտարի վատը գըրկեց, համբուրեց,
Իւր գեղեցիկը մերժեց, մըսրակեց...
Այս ամէնից յետ՝ ազգս ինչպէս սիրեմ.
Ի՞նչ անեմ՝ որ Հայ ծնւած աղջիկ եմ։

Հրաճեշ

Ի՞նչ է ուրեմն ձեր ցանկացածը,
Ի՞նչն է գըրաւում ձեր քընքուշ սիրտը՝
Եթէ ոչ Հայը, ոչ Հայի լիզուն,
Ո՛չ Հայի փառքը, ոչ Հայի անուն,
Ո՛չ քոյր ու եղբայր, ոչ Հայ դերդաստան,
Ո՛չ Հայ դըրացի, ոչ Հայ ազգական,
Ո՛չ թատրոն, դըպրոց, լըրագիր Հայոց,
Ո՛չ ընկերութիւնք բարեգործ Հայոց,
Ո՛չ Հայ ըզգացմունք և սիրտ ու հոգի,
Ո՛չ կըրօն, հաւատ, Հայ եկեղեցի,
Ո՛չ նըւիրական մեր սուրբ Հայրենիք՝
Որը ծընում է Եդեմայ ատինք.
Կամ աւանդական մարդկութեան որբան՝
Որին հըսկում է Մասիսն Հայկական...
Կամ արդեօք պատճառ, կամ քինչ այդ
պատճառ՝
Որ ձեզ ձըգել է այսպէս քարէքար,
Որ ձեզ տըւել է զգացմունք օտար,
Այդպէս հընչելով անողորմաբար։

Վասկուհի

'Ի հարկէ պատճառ—
Եւ ո՛վ այն չիմար՝
Որ իւր ազգի մէջ ամէն ինչ օտար,
Համոզմունքն օտար, օտար դաղափար,
Նիստ ու կացն օտար, օտար ըզգացմունք,
Օտար լեզւախօս, ազգայնիչ շեղմունք,
Ազգայինը խոր վիրապում թաղած,
Օտարայինով պճնազարդարւած,
Օտար ուսումով, հայեացքով օտար,
Օտար տարազով, ազ-հայեալ օտար,
Սովորոյթ, բընոյթ, կենցաղը օտար,
Ազգային համեստ, ամօթխած երես
Փոխակերպել է անամօթ երես.
Ազուէսաժըպիտն երեսին կընքած,
Ձերմակ ատամին տակ ան սիրտ պահած,
Ի՛սկ համոզմունքը դաւաճանելով,
Դիմակաւոր՝ բայց խորթ զգացմունքով
Կեղծում-խաբում է—*թէ ազգասէր եմ,*
Հայրենեաց զոհւել ես միշտ պատ-
րաստ եմ,
Հայրենեաց փառքի զոհին սուրը սե-
ղան՝
Ահա ո՛ւր է՝ իմ հանգի՜ստ, զերեզ-
մա՜ն...
Դիմակաւորւել՝ ես մինչ գարչել եմ.
Ի՞նչ անեմ՝ որ Հայ ծնւած աղջիկ եմ։

Հրաճեշ

Սխալ է ընաւ ձեր մտոր կարծիք,
Հայը օտարին ճրբ է խաղալիք.
Աչխարհը բոլոր թէ յածէք-չրջէք՝
Ազգաւեաց հետ Հայ գըտնել կարող չէք։
Հայը՝ էր և է միշտ Հայրենասէր.
Ցանցանք է կոչել նրան օտարասէր.
Նա հազար լեզւով է գըրել, խօսել,
Բայց համոզմունքը նա չէ վաճառել.
Նա քաջ է եղել և մինչ էլ ազատ՝
Լուծել արիւնի վրէժն հարազատ։
Սիրել է նա մինչ Ազգ-եկեղեցի,

Կրօն ու լեզու իւր նախնիներէն.
Սիրել է նա իւր սիրուն Հայրենիք.
Օ՜հ, չէ ունեցել սիրոյ մէջ կեղծիք.
Եւ սերունդներիս մինչև այսօր իսկ
Անջինջ է հասցրել իւր սիրոյն կընիք։

Վասկուհի

Թերթեցէք, պարոն, Հայոց պատմութիւն՝
Կուսանիք յայնժամ դուն ճշմարտութիւն,
Որ Հայն է աւրել իւր տուն ու բընակ,
Եւ իւր Հայրենիք արել աւերակ.
Իսկ այսօր, երբ նա էլ չունի ոչինչ՝
Հանուիմ է ահեղ չըռինդ ու ճըռինչ.
Ես զարմանում եմ...
Ես զարմանում եմ՝ երբ ծափվարու որներ,
Ահգդ, Ահգդ... գուռացող ցնորամիտներ
Իրենց քալքանդուկ աշխարհը աւեր՝
Խօսքով չինելու կարդում են հրաւէր։
Օգային ամրոց այդ չինողներից.
Խաստիկ կարասի այդ հնչիւններից.
Երազանալու սին տեսլականքներից
Ես դեռ շատ վաղուց զգուել դարչել եմ.
Ի՜նչ անեմ՝ որ Հայ ծնուած աղջիկ եմ։
Ես զարմանում եմ...
Ես զարմանում եմ, չատ եմ զարմանում—
Որ վախկոտ Հայը հէնց հոս է լռում.
Հազար ծակ ու ծուկ է նա որոնում,
Եւ լոկ այնտեղից՝ քա՜յ-քա՜յ սրտում...
Առում է իւր մէջ ամեն ինչ օտար՝
Թուրքը՝ օտարին պաչտում սիրաբար։
Վախկոտ, կեղծ Հայից, օհ, միչտ զզուել եմ.
Ի՜նչ անեմ՝ որ Հայ ծնուած աղջիկ եմ.
Հէնց դրա համար խիստ եմ զարմանում,
Որ դուք այդ ազգի սէր էք քարոզում—
Միմեանց միչտ դաւող, ծառնող, կեղեքող,
Իրարու միսը անխնայ ծամող,
Խուլ անկիւններում խոշորներ բրդող,
Օտարի առաջ գլուխը ծռող։
Պէտք եղած տեղը օտարին պաչտող,
Իւր Ազգ-Հայրենիք ատող, ուրացող,
Օտար կրթութեամբ զաւակաց կրթող,
Եւ օտար լեզուով իւր տանը խօսող,
Եւ օտարներով որդիք սընընդող...։
Պէտք եղած տեղը՝ Ահ՜գ ճրճռացող,
Ակզբաէր անուան հուչակ, դոյք վարձող,
Կրօնի չըւաքի տակ մտնող, պահուղ,
Եւ եկեղեցին ամրոց դաւանող,
Հոգևորների անունից խօսող,
Նրանց թևերով ճախրող, սաւառնող...։
Պէտք եղած տեղը իւրը հայհոյող,
Սուրբ աւանդութիւնք ոտնատակ անող,
Ապգ-եկեղեցուն սքացի տըւող,
Լեզուն կարկատող, նորով պարպատող,
Եւ գալրոցներից կրօնը հալածող,
Հոգևորներին թքքոտ, անարգող,
Եւ ամեն տեղից նրանց արտաքսող...։
Օ՜հ, ես այդ ազգին սիրել կարող չեմ.
Ի՜նչ անեմ՝ որ հայ ծնուած աղջիկ եմ։

Հրաչեա

Հէնց այդ է ցաւը, որին մենք փութով
Մօտենանք պիտի դեղ ու դարմանով.
Ասել—հեռանալ թշուառ հիւանդից.
Լըսել էք արդեօք մի օր դուք մեկից.
Ասենք թէ՝ հիւանդ է մեր հայ ազգը,
Հարկ չեմ տալ նրան մեր պարտ-փըրկանքը...
Եւ մեր պարտք—փրկանք կրլնի այն միայն՝
Որ մենք կըսպասենք հիւանդ Հայաստան,
Որ մենք կըխօսենք լեզուն պապական,
Բարձր կըպահենք Իրօյն Հայ անուան,
Որ աղջիկ, տրդայ Հայի սուրբ ծնունդ,
Հայ ըզգացմունքով կառնու իր սնունդ
Որ հայ աղջիկը հայ մարդ կըսիրէ,
Եւ ինչ հայինն է՝ նախ այն կըպաշտէ՝
Եւ հայ տղան էլ, ինչ որ է հային՝
Նախ այն կըգրէ մօտիկ իր սրտին.

Վասկուհի

Այո՛, խիստ ճիշտ են խօսքերդ, պարոն,
Դա ազգի համար է մի Ոսկի Ձօն...
Բայց որքան արևն հեռու է երկրից՝
Այնքան հեռու է ձեր խօսքը գործից—
Ձեմ կարող բընաւ ես ինձ համոզել՝
Թէ Հայն ևրբև է կարող է զարթնել,
Եւ ըզգաստանալ, իրօք սթափուել,
Թէ նա կարող է ինքն իրեն սիրել
Եւ Սէր Միութեան ծըրարին ապրել...։
Երբ հային դու տաս իրաւունք հըզօր,
Կամ ազատութիւն ուժեղ զօրաւոր՝
Նա ինք կը լինի իր իսկ բռնաւորը...։
Երբ գէնք-զրահով ըսպառազինես,
Եւ քաջ մարտիկներ կըռես ու կռիւես,
Հռոմէական փողանգներ կազմես,
Աչխարհասաստան վաչտեր խառնիս՝
Հաւատա, պարոն, որ այդ մեր հայեր
Իրենց ոյժն ու թափ, գէնքեր ու սըրեր
Իրարու վրայ ջարդ ու փչուր կանեն,
Իրարու արիւն հուշտ, կուշտ կը ծծեն,
Իրենց հայրենիք իրենք կը քանդեն...
Իրենց անիմաստ արարքի վրան
Օտարներին էլ ծիծաղել կըտան:
Եւ դուք այդ ազգի վրայ յոյս ունիք,
Կամ գալիք փառքի վրայ աչք ունիք...։
Ո՛չ, ոչ. անցեալին՝ մի ակ ու աւազ.
Ներկային համար մի տըխուր դադար,
Որն իրենց ձեռքով հայերը չատ վաղ
Ձինել-պատրաստել են միասլաղաղ.
Իրան ես ահա խիստ համոզուած եմ,
Մեր Հայերից՝ լոկ այդ ըսպասած եմ...
Ի՜նչ անեմ որ հայ ծնուած աղջիկ եմ։

Հրաչեա

Ո՛չ, ոչ, օրիորդ, փոխէք ձեր կարծիք,
Սիրէք ձեր ազգը, սիրէք Հայրենիք.
Կա՞յ արդեօք մի ազգ, որ ազատ լինի
Ան չարիք-ախտից՝ որը հայն ունի։
Օ՜հ, մի՛ մոլորուիք, չքնաղ հայ աղջիկ,
Ձեղնից է սպասում ազգը իւր բարիք.
Ցըուէք բարեկիրթ, ուսեալ զաւակներ,
Եղէք Հայ ազգին մայր-դաստիարակներ.
Եւ կը հաւատաք յայնժամ անպայման՝
Թէ հասաւ Հային օր կենդանութեան...
Հայ աղջիկն է միչտ հղել մեր յոյսը,
Այո՛, դուք էք, դուք մեր աչքի լոյսը,
Մ'եր ազգի լոյսը,
Մեր ազգի յոյսը։

Վասկուհի

Ի զուր էք, պարոն, ճգնում.աշխատում
Փոխել իմ կարծիք և կամ համոզում.
Ի՛լ հէրիք է իմ խօսելս այսքան,
Խօսքերս անդարձ են ու միչտ անպայման...։
Ես աւելի չուտ կը հաւատայի—
Թէ մի օր արևն ցած կըհրդեհուի.
Բայց երկիրն կապրի ու չի կըրակուի.
Քան թէ հաւատամ— թէ երբ Հայն կանգնի՝
Կանգնելուց յետոյ էլ նորից չընկնի...։
Դարեր են անցնում՝ հազիւ է կանգնում,
Կանգուն իւր վիճակ կէս դար չէ պահում.
Եւ ինչու այդպէս՝
Ա՜խ, որովհետև
Հայն եղել է քաջ իւր Հայի վրան,
Բայց միչտ էլ ըստրուկ օտարի դրան...։
Օտարը ունի պատիւ, զգացում—
Ազնիւն է ընտրում, ազնիւն է պաչտում,
Իւր մէջ և ինքն է ազնիւն ստեղծում,
Եւ իւր ստեղծածն՝ աստուածացնում.
Նա ազգայնական ունի պրինցիպներ,
Համամարդկային սուրբ իդէալներ.
Նա ծունկ է չոքում հանճարի առաջ,
Եւ կոյր նախանձի նա չունի հատաչ.
Ուրախանում է, չէ մըթնում, ախրում,
Երբ իւր ևս-ից մեծն է ցոլում-փայլում.
Բայց Հայն այդ ունի՞, ունի՞ քաջութիւն,
Ո՛ւր է նրա մէջ առաքինութիւն,
Ո՛ւր է նրբա մէջ հոգւոյ մեծութիւն,
Կամ վեհանձնութիւն, կամ մեծանձնութիւն,
Որ իւր համազգին սիրէ իրեն պէս,
Նորան էլ ցանկայ փայլուն աստղերէզ ..
Եւ գլուխ ճրիչէ հանճարի առաջ,
Այլ ոչ իւր ևս-ին տայ ծափ ու շառաչ.
Որ չտես-պեղէ նորան գերեզման,
Եւ ինքը չերգէ պիակի վերան...։

Այդ ճառերգ, դրուագ,
Գովք ու գովասանք
Բուերի մնչիւն՝ ես միշտ գտած եմ,
Եւ նըրա համար ազգըս ատած եմ.
Ի՞նչ անեմ, որ Հայ աղջիկ ծնւած եմ։

Հուպեռ

Ուրեմն հայը չունի քաջութիւն...
Ինչ, չըդողդոդաս, տեղդ կաց կանգուն.
Հայի դուռ բազկին դու խնդա անծանօթ,
Որ Հայ լինելդ էլ թըւի քեզ ամօթ...
Առ դու, ուրեմն, իմ վըճիռ վերջին,
Խոստովան եղիր գէթ վերջին չնչին—
Որ հայի բազուկն ունի ոյժ ու զօր,
Որ հայի կորովն է յոյժ զօրաւոր,
Որ ահեղ է Հայն
Եւ վրիժառն՝
Թէ որ պղտորեն նորա պարզ արիւն,
Թէ որ վրդովեն սուրբ խաղաղութիւն...

—

Ձայնեց գնդակը . . . . .
. . . . . .
. . . . . .

II

Վասկուհին Պոնտոս թըռաւ թևարձակ...
Հրանտն՝ ի Մասիս, յոյզ ու դժկամակ...։

—

Անցաւ հինդ տարի
Միջոց անջատի.
Հրանտ—Վասկուհին չը տեսան իրար...
Լուռ էր բանբերը երկուսի համար...
Հինդ ոչ ձիդ տարիք
Շատ աղէտ-չարիք
Եղան փորձաքար
Երկուսի համար...
Նոր աշխարհայնացք ու նոր ուղղութիւն
Բերին երկուսին ճիշտ գիտակցութիւն.
Աղնւի, գեղեցկի,
Սուրբ զաւակիդ՝
Կամ հայրենասէր—ազատագրական,
Վեհ ըսկզբունքների...։

—

Եւ մի գեղեցիկ մայիս առաւօտ,
Երբ սիւդն անուշիկ, զեփիւռ մեղմընթաց
Լոյսի ճակատին կապէին նարօտ,
Սահէին ութեր բանբեր ճեպընթաց,
Իջնէին ի դաշտ նազ ծաղկոց սրտին,
Եւ ցօղը այգուն՝ մարգարտի հատիկ
Շիթ-շիթ կը շարուէր վարդի նազ չըթին,
Եւ չառագունէը բոսորով երկինք,
Կամ հրճուանք տային ամպաչուշ լերինք՝
Արշալոյսի մէջ, իրըր սրբանուէմ
Մանուկ արևն էր օրօրւում, զարթնում—
Խաւարը լուծում...
Մուխը փարատում
Լոյսն՝ աշխարհ ծագում.
Եւ երբ նա հըզօր աչքերը բացեց
Ու խանձարուրից դէպի կեանք նետուեց՝
Տեսաւ որ մի պարզ աղբիւրի կողքին
Վարդն ու սոխակը ծափ տային ջըրին,
Վարդը՝ նազ ժպիտն բոսոր երեսին,
Սոխակն՝ անուշերգն իւր համեստ չրթին.
Երջանիկ վայրին, գոհութեան գրկին,
Եւ ազատաչունչ սիրաբախ կրծքին՝
Սէր տալ, սէր առնել,
Սիրտ տալ, չունչ առնել,
Շունչ տալ, կեանք առնել,
Կեանք տալ ու ապրել.
Ապրիլ միասին
Միմեանց ուխտէին.

—

Վարդն կարմիր սրտով,
Սոխակն անուշ տաղով՝
Այն ականակիտ աղբիւրի ճակտին
Երկնուց ցօղաչար,
Երկրուց սիրաչար
Մի պարզ մակագիր ամօրժ կարդային։

—

«Հոսէ դու, իմ ջուր,
Հոսէ զօր գիշեր,
Տար դու ամենուր
Հաւատս, յոյս ու սէր
Վերամ Միութիւն
Կարգա դու ի լուր,
Կազմէ համամիւռ
Եւ եղբայր ու քոյր
Երգէ աննըկուն».
«Ես Մայր Արաքսի ակունքից կուգամ,
Հայրենի փառքին ես մատաղ կերթամ...
Ուխտել եմ վաղուց—
Ազատագրական վեհ գաղափարի
Վտակներն տանել աշխարհ հայրենի.
Բայց նախ՝ իմ ցնցուղք
Մանկական սրտին
Կըզգրեմ բաժին».
«Ադրիւրիս ցնցուղք՝ ծով սիրոյ անուն
Թող այսօր կոթող տըննկեն սրտերուդ
Ձեր՝
Որոց սաեի էր միշտ Միութիւն,
Որոց հաճելի քէն-սահմութիւն
Եւ սուտ ցըյտուրդ»։
«Բաժին—բաժնութիւն
Քանդեցին մեր տուն...
Արդ Թող Միութիւն
Նորոգէ Հայուն...»

III

Հուպեռ

Անցաւ, սահեցաւ ուղիղ հինդ տարի...
Եւ այս վերնագիր ու դառըն վորձեր
Համոզեցին ձեզ, ազնիւ հայուհի,
Որ փոթորկալից էին ձեր խօսքեր,
Որ ձեր ալեկոծ և ողջէութիւն
Ցուզուած, յուհատես էր դէպ հայութիւն.
Արդ հետաքրքիր է ինձի համար—
Թէ ինչ համոզմունք և կամ գաղափար
Այժըմ հարատատ է ձեզ կամ օտար

Վասկուհի

Երբ ես ոգը դըրի Բոսփորի ափունք...
Լոկ անդ յիշեցի հայրենեացս արցունք.
Գըտայ որ չատ խիստ էին իմ յուզմունք
Այն ազգի վըրայ, որ իրը նորատունկ
Ովասիսի մօտ, անապատային
Աւազոտ ծովում ընկած առանձին
Հողմ ու աւազից ծեծւում է ծըռւում,
Ձըկւում մինչ գետին, ու նորէն ուղղւում
Բացարձակ կանգնում...։
Ես անդ յիշեցի—որ աշխարհս եգեմ
Բիւր անգամ եղած է թատերաբեմ,
Ուր գոռոզ հռովմ, յոյն գարէոսոխ,
Սելճուկ ու պարսիկ, սկիւթ բազմամբոխ,
Եւ կիսալուսնեան աւիւնածարաւ
Վրիժառ ոսոխ Եւրոպին գըրաւ՝
Հայրենեացս բեմին դերակատարներ,
Սուր, դաւ, արհաւիրք տեղային դարեր.
Ես անդ յիշեցի որ իմս Հայ աշխարհ
Ընդ միշտ եղած է միջանց ճանապարհ—
Ճանապարհ հըրի, ճանապարհ սըրի,
Ճանապարհ հողի, ճանապարհ ջըրի,
Ճանապարհ արեան ծով արցունքների,
Ճանապարհ չահի ժանտ օտարների,
Ճանապարհ՝ թողած արեան հետքերի։
Ես անդ յիշեցի որ իմս Հայաստան,
Եղած է բեռնկիր դրաստ ու լըծկան՝
Քաշել, տարել է լուծը գերչական,
Տըւել օտարին վաստակ տարեկան,
Եւ միշտ ոսոխաց ապաստանարան,
Ռազմամթերց և կարեաց հազար.
Ջօրք ու բանակին միշտ կեր ու պաշար
Խղճուկ իմ ազգը ինչ սիրայօժար
Եղած է բաշխող ու մատակարար։
Ես անդ յիշեցի որ ազգըս Հայկեան
Քրանաթոր ճակտին վաստակ չահեկան,
Իւր անդ, անդաստան, այգ ու մարգաստան
Եւ օրավաստակն գեռ չըվայելած՝
Օտարի գըռան կիտուկ է դիպած.
Եւ օտար որկորք Հայ ըշտեմարան,
Խատարկ ձեն թողել, մատնել ըսպառման.
Ծարել, գերել են ինչ որ հայկական,
Պղծելով Հայուն յարկ ու գերդաստան,
Խարձնել մընալով ծարաւ Հայ արեան.

(Կը շարունակի)

Ըննայեցի.



Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ

Սովորական Մարգարիտը, որ խեցիներուն ամենաընտիր տեսակն է, բոլոր գոհարեղէններէն ամենաթուրըն ու ազնիւն է։ Մարգարիտը չունի ադամանդի ոչ փայլն ու կրկիսը և ոչ նրա փոքրիկ արտաքին հրաշալիքը։ Հայց Մարգարիտն է, որ ներկայացնում է վեհութեան և գեղեցկի իմաստը։ Օրինակ ասում են՝ Կովկասը Ռուսական թագի մարգարիտն է։ Բերանից մարգարիտ է թափւում։ Եւ աւետարանի խօսքը թէ՝ «խոզերի առաջ մարգարիտ մի ածէք»։ Բազմն-բազմնը ամարանոցների մարգարիտն է և այլն։ Նշանաւոր տոմարը, թագաւորազնները և թագուհիք իրանց գոհարեղէնների ժողովածուների մէջ մարգարիտին վերաբերում են, մի առեսակ, ակնածութեամբ և սրբազան համարում այդ գոհարը։ Մարգարիտը կրում են իրանց ճակատին և կրծքին ամենածանր վշտի օրերին (երբ սգաւոր են, կորցրել են սիրեցեալին), բայց կրում են և ամենանշանակալից ուրախութեան ժամանակ, օրինակ պսակելիս։ Բարձր դասի մէջ, մինչև այսօր էլ, օպերային ներկայացումներին պճնւում են վայլուն ադամանդներով, մինչդեռ լուրջ սիմֆոնիաներին ընդունւած է կրել միայն մարգարիտ։

Ծաղիկների մէջ էլ մարգրիտը մըտատալարի անմոռանալիութեան, սրբա-

զան թախիծի նշանակութիւն ունի։ Վադամոռ, քնքոյշ սիրեցեալի գագաղը մարգրիտներով են լցնում։

—

Կեանք, իսկական կեանք ունէր մեր մէջ, այժմս անմահութեան գրկում, մի կենդանի Մարգարիտ, մարգարիտների իսկական մարգարիտը՝ տ. Մարգարիտ Պայազատեան-Նաւասարդեան։

Հայրենիքի կրծքից երբ արիւն էր հոսում, երբ կոյսերի, հարսների մանուկների անմեղ գոհերից ողջակէզ էր մատուցանում անգութ, նենգամիտ և արիւնարբու Եւրոպան իր պաշտօնակցութեան ձեռքերով, և երբ սպառափառ որդի հայրենիքի Շողիկները, իրանց պլուխները մի կերպ փախցրած, մեզ մօտ էին աղաւտանում, — ահա հէնց այդ ծանր օրերին, 1896 թ. Սասունի կոտորածից յետոյ է, որ Մարգարիտը իր մարգարտանման «Շողիկի դարձը հայրենիք» պատմւածքն է անում և ապա ինքը պանում երկինք սուսանած Շողիկներին բուրելու իր մարգարտանման բուրմունքը։ Եւ այսօր, երբ Մարգարիտի անհնչանքն իսկ իրականութիւն դարձած, Շողիկները պատրաստւում են հայրենիք գալու և Շողիկների իսկական հայր ու հովանին անվհերն Պատրիարք սիրեցեալ Իզմիրլեան արդէն իսկ վերապարձել է ստանձնելու հայրենիքի վերածնութեան արօրն ու մուրճը, այսօր ամենանւիրականը՝ Շողերի դարձը հայրենիք *Մարգարիտի* պատմւածքը ամբողջովին նւիրաբերում են մեր ընթերցողներին։

Ջ Ա Ր Ո Ն Է Ի

Վաճառւում են

Ն Ա Ր-Դ Ո Ս

ԱՆՆԱ ՍԱՐՈՑԱՆ, Բ. ապ. գիրք . . 25 կ.
ՑԱՆՑԻՐՈՍՍ ԱՂՋԻԿԸ, վիպակ „ . . . 20 „
ՆՈՂ ՕՐԵՐԻՑ ՄԷԿԸ, պատկեր „ . . . 10 „

Դիմել «ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ» խմբագրութեան.

„Մանզումեի էֆքեար“

օրաթերթ

Բաժանորդագրութիւն. տարեկան 25 ֆրանկ կէս-տարին 14 ֆրանկ
Հասցէն՝—Rédaction du journal arménien
„Manzouméi Efkiar“
Grand Rue de la S.-Porte, 38. Constantiuople.

ԲԻԶԱՆԴԻՈՆ

օրաթերթ

Բաժանորդագրութիւն. տարեկան 40 ֆրանկ, կէս տարին 20 ֆրանկ, եռամսեայ 10 ֆր.
Հասցէն՝ Rédaction du journal arménien „Puzandion“
Constantinople.

„Ա Ր Ե Ւ Ե Լ Ք“

օրաթերթ

Բաժանորդագրութիւն. տարեկան 35 ֆրանկ, կէս տարին 20 ֆր.
Հասցէն՝ Rédaction du journal arménien „Arévelk“.
onstantinople—Galala.

ԱԶԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ, *տարեկան* 12 *ֆռ.*
Հասցէն՝ The Azk. Pub. C° 699. Wash st.
Boston. Mass.

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Բ. Նաւասարդեանի

առ ա ջ ի ն

Մ. ՀԻՒԱՆԴԱՍՈՑՈՒՄ

(Վօրոնցովի տրամի հանդէպ)

կատարում է *հակահօդևրպային պատուաստումն* 9—2 *ժամ առ.* և $5^1/_2$—7 *ժ, երեկոյեան:*

Վճար *խրաքանչիւր պատուաստման համար* 1 *ր.* 50 *կ.:*

Հրատար. բժշկ. Բ. Նաւասարդեանի

Լոյս տեսաւ

(Թիւրքահայ կեանքից)

«ՇՈՂԻԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅՐԵՆԻՔ»

վէպիկը, հեղինակութիւն Մարգարիտ Պայազատեան-Նաւասարդեանի:

Գինը 10 կոպէկ

Դիմել՝ Тифлисъ, Первая ч. Лѣчебница Д-ра мед. Навасардіана.

УГОЛЬ
КУЗНЕЧНЫЙ, ПАРОВИЧНЫЙ, ПЛАМЕН., АНТРАЦИТЪ, КОКСЪ.
ЦѢНЫ ОПТОВЫЯ.
А. БРАУХЛИ, Харьковъ.

ՄՇԱԿ

Յուլիսից մինչեւ տարւայ վերջը—6 *ր.*, Ամերիկայ 6 *դօլլար*, Եւրոպայ 30 *ֆռ.* Պարսկաստան 10 *ր.*
Հասցէ փոխելու համար 40 *կ.*
Тифлис. Редакція „Мшакъ“
Rédaction du journal
„Mschak“. Tiflis.

ՁԱՆԳԱԿ

Գրական - հասարակական և քաղաքական.

o r ա թ ե r թ

Յուլիսի 6-ից մինչև օգոստոսի 1-ը 50 կ., մինչև տարւայ վերջը 4 ր., Արտասահման 6 ր. Պարսկաստան 5 բուբլի:

Հասցէն՝ Тифлисъ, Троицкая, 6.

Շքեղ մաքուր չափաւոր գներով հիւրանոց Բեռլինում

H O T E N E W - Y O R K

Frieder. Wilh. Schulze

Friedr.—str. 136. *Հազիւ երկու րոպէ* Banhof—Friedr.—str. *կենտրոնական կայարանից, կամուրջի վրայ: Սենեակ քան 60 սենն. չքեղազարդ 80 մահճակալներով ընտանիքների համար: Առանձին սալօններ, սեղանատներ: Մի մարկով առաւօտեան նախաճաշ (տուբա, շոկոլադ, թէյ, մեղրով, կարագով, պանրով, միւրաբաններով և զանազան թխւածներով) սենեակները օրական 2—15 մարկ: Շաբթով աւելի մատչելի պայմաններով*

Электропеч. А. М. Тарумова, уг. Баронская № 2, Тифлис.

Էլեֆտրաշարժ տպ. Ա. Մ. Թառումեանց, Բարոնակ. փ. № 2.

XXVI ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ 1908

ԱՂԲԻՒՐ №№ 10—11-ի բովանդակութիւնը.

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Լև Տօլստոյ և իր ինքնաձեռագիրը
Լև Տօլստոյը հիւանդ՝ բազկաթոռի վրայ։
Եասնեա Պօլեանա։
Եասնայեայ Պօլեանայի անտառը։
Լև Տօլստոյ պօստկարտերի մէջ։
Կոմսուհի Սօֆիա Անդրէեւնա իր ամուսին Լև Տօլստոյի հետ Ղրիմում։
Լև Տօլստոյ և պատկերներ իր ստեղծագործութիւնից։
«Խաւարի իշխանութիւնը» Լ. Տօլստոյի։

ՆԻՒԹ

Լև Տօլստոյ ասում է. . . Քամալեան Ս.
Կոմս Լև Տօլստոյն (կենսագրական) . Ջ.
Կօպէկը, Լև Տօլստոյի (լեգենդա) . Վ. Թումանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ընթերցողները հրաւիրում են

ԱՂԲԻՒՐ ու ՏԱՐԱԶԸ

ՏԱՐԱԾԵԼ.

Մենք չունենք ոչ գործակալներ և ոչ կոնտակիցներ։ ԱՂԲԻՒՐԻ կոնտակիցները անմեղ մանուկներն են։ Եւ հայ մանկան բարեկամները թող չը զլանան ամենամանր զգացումներով նպաստել նրանց բարի և լուսաւոր ուղիով մեծանալու նախանձախնդիր ԱՂԲԻՒՐԻ և ՏԱՐԱԶԻ տարածման։

ՎԵՀԱՓԱՌ ԻՋՄԻՒԼԱՆԻ

մեծարի 18 գոյնով պատկերը լոյս կը տեսնի գարնանը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

ԱՂԲԻՒՐԻ *ներկայ համարը, որ նուիրած է ԼԵՒ ՏՕԼՍՏՕՅԻՆ նրա ութսունամեակի առիթով և գեռ հոկտեմբերի վերջերին էր կազմ ու պատրաստ, անկարող եղանք ժամանակին լոյս ընծայել, որովհետև ՄԵԾ ԳՐՈՂ-ԲԱՐՈՅԱԳԵՏԻ պատկերը՝ իր ձեռքով մակագրուած և նուիրուած թիֆլիս խմբագրին, կամենում էինք նոյնութեամբ հրատարակել ԱՂԲԻՒՐԻ Լ. Տօլստոյեան տետրում։*

Սակայն այդ պատկերի կլիշէն, որ պատրաստուած էր արտասահմանում և ուրիշ կլիշէների, իրեղէնների հետ յանձնուած էր Վարշաւայում Рос. Транс. Հնկ. № 3183054 ստացականով, ժամանակին չը հասաւ մեզ, որովհետև կորել էր։ Երկար որոնումներից, սպասելուց յետոյ, ստացանք մեր կոպէկները, արկղները, որոնցից մէկը ջարդուած, բացուած և շատ պակաս իրեղէնների հետ չէ կար և այդ կլիշէն։ Բարեբաղդաբար իսկական պատկերը մեզ հետ ունենալով, նորից կլիշէ պատրաստեցինք, որ և տպագրում ենք։



Милая Л. Н. Толстой,
1908, 25 Авг.

Տիգրան Յակոբեան Նազարեանին
ԼԵՒ ՏՕԼՍՏՕՅ
1908, 25 օգոստոսի։

LE COMTE LÉON TOLSTOÏ